# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

04 մայիսի 2020 թվականի N 112

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԵՎ ՏՆԱՄԵՐՁԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումը և հիմք ընդունելով ավագանու 27.12.2019թ-ի թիվ 98-Ն որոշումը .

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Էմմա Միքայելի Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ 2328196 վկայական) բնակելի տան և տնամերձին տրամադրել հետևյալ հասցեն՝ Վայոց ձորի մարզ, համայնք Եղեգնաձոր ք., Գլաձորյան փողոց 3-րդ նրբանցք տուն 19:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2020թ. մայիսի 04
ք.Եղեգնաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

## *Ո Ր Ո Շ Ու Մ*

*04 մայիսի 2020 թվականի N 113*

## *ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի , <<Տեղական տուրքերի և վճարների մասին >>Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և հիմք ընդունելով համայնքի ավագանու 27.12.2019թ-ի թիվ 98-Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Թույլատրել Ա/Ձ Շուշիկ Օհանյանին եղեգնաձոր համայնքի Երևանյան խճուղի հասցեում զբաղվելու հեղուկ վառելիքի վաճառքով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անձին առձեռն հանձնելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2020թ. մայիսի 04
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

# ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

*ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ ՀՎԳ - 04*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ, ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԿԱՄ ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ՆԱՎԹԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ*

Տրված՝ ***04 մայիս 2020թ.***

Վաճառքի թույլատրված ապրանքի անվանումը՝ *Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար:*

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և գտնվելու վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝
*Ա/Ձ ՇՈՒՇԻԿ ՕՀԱՆՅԱՆ, Ք.Եղեգնաձոր, ՀՎՀՀ՝ 84057348:*

Գործունեության տեսակի իրականացման վայրը՝ ***ք,Եղեգնաձոր,Երևանյան խճուղի:***

Շինության տեսակը՝ *Հիմնական շինություն:*

Թույլտվության գործողության ժամկետը՝ *01 հունվար 2020-ից մինչև 31 դեկտեմբեր 2020-ը:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մայիսի 2020 թվականի N 114

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 22.04.2020Թ-Ի ԹԻՎ 103 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Համայնքի ղեկավարի 22.04.2020թ.-ի «Անշարժ գույքի գործառնական նշանակությունը փոխելու մասին» թիվ 103 որոշման հիմքը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ղեկավարվելով ''Տեղական ինքնակառավարման մասին'' Հանրապետության Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 02.02.2002թ. N88 որոշմամբ հաստատված կարգի պահանջները և հաշվի առնելով Եղեգնաձորի համայնքապետարանի գլխավոր մասնագետ - գլխավոր ճարտարապետ Ա. Աղաջանյանի 21.04.2020թ.-ի եզրակացությունը՝»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2020թ. մայիսի 05
ք.Եղեգնաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

05 մայիսի 2020 թվականի N 115

ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերով, հիմք ընդունելով ավագանու 13.03.2020թ.-ի թիվ 28-Ա որոշումը, 23.04.2020թ. համայնքապետարանում կայացած աճուրդի թիվ 1,2,3 արձանագրությունները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Համայնքային սեփականություն հանդիսացող համայնք Եղեգնաձոր ք., Շահումյան փողոց 12/5 հասցեում գտնվող, 10-001-0044-0047 կադաստրային ծածկագրով, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, 0.00521 հա մակերեսով հողատարածքը հատկացնել աճուրդում հաղթող ճանաչված Արայիկ Վարազդատի Գրիգորյանին՝ 201100 ՀՀ դրամ առավելագույն արժեքով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արայիկ Վարազդատի Գրիգորյանին որոշման մասին իրազեկելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2020թ. մայիսի 05
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

05 մայիսի 2020 թվականի N 116

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերով, հիմք ընդունելով ավագանու 21.01.2020թ.-ի թիվ 09-Ա որոշումը, 23.04.2020թ. համայնքապետարանում կայացած աճուրդի թիվ 1,2,3 արձանագրությունները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Համայնքային սեփականություն հանդիսացող համայնք Եղեգնաձոր ք., Կամոյի փողոց 4/1 հասցեում գտնվող, 10-001-0141-0043 կադաստրային ծածկագրով, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, 0.02863 հա մակերեսով հողատարածքը հատկացնել աճուրդում հաղթող ճանաչված Սամվել Զաքարի Կարապետյանին՝ 1053000 ՀՀ դրամ առավելագույն արժեքով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սամվել Զաքարի Կարապետյանին որոշման մասին իրազեկելու պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2020թ. մայիսի 05
ք.Եղեգնաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*06 մայիսի 2020 թվականի N 117*

*ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումը և հաշվի առնելով ավագանու 27.12.2019թ-ի թիվ 98-Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Գվիդոն Հեկտորի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող տնամերձ հողամասի (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2151160 վկայական) հասցեն փոփոխել և տրամադրել հետևյալ հասցեն՝ Վայոց ձորի մարզ, համայնք Եղեգնաձոր ք., Վ.Համբարձումյան փողոց թիվ 26 ։
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անձին առձեռն հանձնելու պահից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2020թ. մայիսի 06
ք.Եղեգնաձոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

06 մայիսի 2020 թվականի N 118

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ Նարեկացու փողոց թիվ 4/3 հասցեում կառուցված ինքնակամ կառույցի (աստիճանավանդակի) պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցը կառուցված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև ելնելով այն հանգամանքից, որ ինքնակամ կառույցի և դրանով զբաղեցված ու սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի սեփականության իրավունքով տրամադրումը չի հակասում սահմանված կարգով հաստատված գլխավոր հատակագծերի, քաղաքաշինական գոտիավորման նախագծերի, հողերի օգտագործման սխեմաների և քաղաքաշինական ծրագրերի պահանջներին, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ կետերի, ''Տեղական ինքնակառավարման մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ.-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ.-ի թիվ 912-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ.-ի թիվ 2387-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 30.11.2006թ.-ի թիվ 1730-Ն որոշումների պահանջներով, ինչպես նաև հաշվի առնելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 27.12.2019թ.-ի թիվ 98-Ն որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Համայնք Եղեգնաձոր ք., Նարեկացու փողոց թիվ 4/3 հասցեում գտնվող ըստ չափագրման հատակագծի 16.01 քմ մակերեսով կառուցված գործառնական նշանակությամբ՝ ինքնակամ աստիճանավանդակը և դրա սպասարկման համար առանձնացված 0.00142 հա մակերեսով, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողատարածքը համարել Եղեգնաձոր համայնքի սեփականություն և այն ճանաչել

օրինական: Կառույցին տալ հետևյալ հասցեն՝ համայնք Եղեգնաձոր ք., Նարեկացու փողոց թիվ 4/3:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված կառույցը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով ձեռք բերելու առաջարկ կատարել կառույցն իրականացրած Մարգուշ Վարազդատի Սուքիասյանին (նույնականացման քարտ՝ 000074880, տրված՝ 26.11.2012թ., 037-ի կողմից):

3. Ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օրինականացման համար սահմանված չափով և կարգով գումարների վճարումից և այդ փաստը հավաստող գրավոր ապացույցը /վճարման անդորրագիր, տեղեկանք և կամ քաղվածք/ ներկայացնելուց հետո 10-օրյա ժամկետում Եղեգնաձորի համայնքապետարանի անունից Գնորդի հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել համայնքի ղեկավարին ուժի մեջ մտնելու օրվանից վեց ամսվա ընթացքում, կամ դատական կարգով՝ երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման մասին անձին տեղեկացնելու օրվանից:

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

2020թ. մայիսի 06
ք.Եղեգնաձոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 մայիսի 2020 թվականի N 119

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ, ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 160 ՔՄ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի,<<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> օրենքի, «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 30.11.2006թ.-ի թիվ 1730-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ.-ի թիվ 2387-Ն որոշումները,և հաշվի առնելով ավագանու 27.12.2019թ-ի թիվ 98-Ն որոշումը, ինչպես նաև հիմք ընդունելով հողամասի չափագրման կոորդինատները /հատակագիծը/, ինչպես նաև Պետրոս Կարապետի Հարությունյանի կողմից 06.05.2020թ.-ին ներկայացված թիվ 121 դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ճանաչել Պետրոս Կարապետի Հարությունյանի, Աշխեն Նորայրի Հակոբյանի, Քրիստինե, Թենի և Սոնա Պետրոսի Հարությունյանների սեփականության իրավունքը համայնք Եղեգնաձոր ք., Մուրացանի փողոց տուն 49 հասցեում գտնվող անհատական բնակելի տան, օժանդակ կառույցների, տրամերձ հողամասի և դրանկից ավել օգտագործվող 160 քմ սահմանազատված հողամասի նկատմամբ:

2. Բնակելի տունը և օժանդակ կառույցները կառուցվել են մինչև 2001թ.-ը և բավարարում են <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին:

3. Բնակելի տանը, օժանդակ կառույցներին և դրանց սպասարկման համար սահմանազատված հողատարածքին տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Եղեգնաձոր ք., Մուրացանի փողոց տուն 49:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անձին առձեռն հանձնելու պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 մայիսի 2020 թվականի N 120

## ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 29.12.2005Թ-Ի ԹԻՎ 235 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Քաղաքապետի 29.12.2005թ.-ի «Քաղաքի Նոր ավան թաղամասի բնակիչ Գվիտոն Հարությունյանի կողմից ավել օգտագործվող հողը հետ վերցնելու մասին» թիվ 235 որոշման վերնագիրը և բովանդակությունը փոփոխել և <<Գվիտոն Հարությունյան>> անուն ազգանունը և շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Գվիդոն Հարությունյան»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անձին առձեռն հանձնելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2020թ. մայիսի 07
ք.Եղեգնաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք

Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 մայիսի 2020 թվականի N 121

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ.-ի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ գլուխը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումը և հաշվի առնելով ավագանու 27.12.2019թ-ի թիվ 98-Ն որոշումը և նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի պահանջներին՝ չի խանգարում ինժեներական կառույցներին, իրականացված կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Համայնք Եղեգնաձոր ք., Միկոյան փողոց թիվ 3/30 հասցեում գտնվող Արսեն Բաբկենի Շահբազյանի կողմից ինքնակամ կառուցված 8.83 քմ մակերեսով կառույցը (ոչ բնակելի տարածքը) համարել օրինական:
2. Առաջարկել կառույցն իրականացրած Արսեն Բաբկենի Շահբազյանին շինության օրինականացման համար վճարել 1քմ՝ 390 դրամ, ընդամենը 3440 ՀՀ դրամ՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 17.04.2003թ.-ի թիվ 470-Ն որոշմամբ հաստատված գործակիցները:
3. Ոչ բնակելի տարածքին տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Եղեգնաձոր ք., Միկոյան փողոց թիվ 3/30:
4. Կառույցը համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինության համալիր ծրագրով նախատեսված գոտիներում գտնվող կառույցների ծրագրերի պայմաններին:
5. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 30 օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման մասին անձին տեղեկացնելու պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 մայիսի 2020 թվականի N 122

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ''Տեղական ինքնակառավարման մասին'' Հանրապետության Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 02.02.2002թ. N 88 որոշմամբ հաստատված կարգի պահանջները և հաշվի առնելով Եղեգնաձորի համայնքապետարանի գլխավոր մասնագետ - գլխավոր ճարտարապետ Ա. Աղաջանյանի 06.05.2020թ.-ի եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վայոց ձորի մարզ, համայնք Եղեգնաձոր ք., Ալավերդյան փողոց թիվ 2 հասցեում գտնվող, Եղեգնաձոր համայնքի ղեկավարի<<Եղեգնաձորի ճանապարհների շահագործման և շինարարական>> փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման թիվ 30042020-10-0007 վկայական), 1119.2 քմ մակերեսով ակումբ-ճաշարանի գործառնական նշանակությունը փոխել դարձնելով պահեստ՝ առանց ճարտարապետա-հատակագծային առաջադրանքի ու շին. թույլտվության:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում անձին որոշման մասին իրազեկելու պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2020թ. մայիսի 08
ք.Եղեգնաձոր